



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՎՅՈՒՅՐ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱՐԴՅՈՒՆԱՐԵՐՈՒԹՅՈՒՆԸ
1931 թ.

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Ленинградского
СССР



ՊԵՏԼԻՐՈՑ

1932

ՅԵՐԵՎԱՆ

60565-67

338.4

4-73

7-1

1831

4533

25/11/80

338.4

4-73

$$\frac{2}{3}$$

1831 10.7

$$\frac{1}{2}$$

25/11/20

238.4

480190

C 32-K
A 503

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ
1931 թ.

9352FIL8

ՅԵՐԵՄԱՆ

12 AUG 2013

Գեոքառտի տպարան
Գլավիտ 7116 (ք)
Հրատ. 2069
Պատվեր 474
Ցիքաթ 6000



60565-67

Հանձնված է արտադրության 10/11 32 Թ. Սա. Զ. Բ.

31 328

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ 1931 Թ.

Հնգամյակի յերրորդ, վճռական տարին թեև հոկտեմբեր, նշված բայց և ի կյան տեմպերով հանդերձ, կանխորոշված եր առաջին յերկու տարիների ժողովրդա-տնտեսական պլաններ ի կատարման, մասնավորապես արդյունաբերության արդ- ֆինպլանների հաջող կատարման ընթացքով:

Խորհրդային Միության բանվոր դասակարգը լենինիզմի դրոշմով, ընկ. Ստալինի գլխավորած ՀամԿ(բ)Կ ԿԿ-ի բաշխե- վիկյան ղեկավարութամբ, մեր վողջ ժողովրդական տնտե- սության սոցիալիստական վերակառուցման մեծ պլանի հա- ջող կատարումով նախադատրաստեց Հնգամյակի վճռական տարվա տեմպերը: Լրացած 1931 թվականը հանդիսացավ վողջ ժողովրդական տնտեսության սոցիալ-տեխնիկական վերակառուցման խորը տեղաշարժերի մի տարի: «1931 թվա- կանը վորևե բուրժուական պետության համար անմատչելի հաղթանակների մի տարի» հանդիսացավ, հաղթանակներ, վոր տարավ մեր յերկրի բանվոր դասակարգը: Շարունակ խորացող համաշխարհային տնտեսական ճգնաժամի ֆոնի վրա, կապիտալիստական յերկրների և դադութների ու կի- սադադութների պրոլետարիատի և վողջ աշխատավոր դյու- ղացիության հետագա աղքատացման ֆոնի վրա, պրոլետա- րական պետության սոցիալիստական տնտեսությունը չտեսն ված տեմպերով զարգացնում է վողջ տնտեսության վերջ- նական սոցիալ-տնտեսական վերակառուցման հետագա բա- ղան:

1931 թվականը սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցումն ավարտելու տարի հանդիսացավ մեր յերկրում:

Այդ տարվա հաջողությունները ամենից առաջ արդյունա-

են մեր կուսակցութեան գլխավոր դժի ճշտութեան, արդունք են սոցիալիստական մրցութեան բազմակողմանի ծավալման, իբրև սոցիալիզմի համար մղվող պայքարում բանվոր դասակարգի հայտարեբաժ մեծագույն ուժի:

Բանվոր դասակարգի անհաշտ ու ամենահետևողական պայքարը հանուն կուսակցութեան գլխավոր դժի, ընդդէմ աջ թեքման, իբրև գլխավոր վտանգի՝ մեր դարգացման տվյալ ետապում, ընդդէմ «ճախ» խոտորումների և հակահեղափոխական տրոցիկիզմի, — ահա՛ այն հիմնականը, վորի շնորհիվ բանվոր դասակարգը յերրորդ տարին փակեց իբրև սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցումն ավարտելու տարի:

1931 թվականը մեկ անգամ ևս հուլիսի տվեց, վոր «տնտեսութեան կապիտալիստական սխտեմը սնունդ սխտեմ ե, վոր տնտեսութեան խորհրդային սխտեմն ունի ախտի տուժվելու քունքներ, վորոնց մասին չի համարձակուի յերազել վո՛չ մի բուժօժական պետութիւն, լինի նա ամենից «դեմոկրատական», «համաժողովրդական» պետութիւնը» (Ստալին):

Յերրորդ վճռական տարւոյ ժողովրդատնտեսական պլանի կատարումը նախորդ 1929/30 տնտ. տարւոյ հաջիտու տվյալների հետ համեմատելով, մենք նկատում ենք վիթխարի տեղաշարժեր վոչ միայն եկոնոմիկայի, այլև ժողովրդական տնտեսութեան սոցիալական վերալուսումնաւորման տեսակետից:

Հիմք ունենալով Խ. Միութեան ինդուստրացման լենինյան քաղաքականութիւնը, արդյունաբերութեան զարգացումն ազգային շրջաններում, արդյունաբերութեան մոտեցումը հումքի աղբյուրներին և բնիկ հիմնական բնակչութիւնից արդիտարական կադրերի ստեղծումը Խ. Միութեան հետմնաց ծայրերում, — կոմունիստական կուսակցութիւնը Հայաստանում ձեռք բերեց խոշորագույն նվա-

ճումներ, վորոնց բայելելիկյան գնահատականը տվեց Համ. Կ(բ) ԿԿ-ը Անդրբերկովի և աղգային կոմկուսակցութիւններին կենտրոնների գեկուցումների առթիվ ընդունված վորոշման մեջ:

Այսօր Հայաստանի բայլելիկները ի մի ամփոփելով կուսակցութեան ԿԿ-ի դործունեյութեան արդյունքներն աղբյուրաբերական շինարարութեան դժով, կատարվում են ազգային հարցում կուսակցութեան գլխավոր դժի ձեռք բերած նվաճումների ստուգատեսը:

Կուսակցութեան X համագումարի՝ աղգային հարցի առթիվ ընդունած հայտնի վորոշման մեջ կարդում ենք — «... նրա (կուսակցութեան—Վ). առաջնագույն խնդիրն ե հանդիսանում հետևողականորեն լիկվիդացիայի յենթարկել ազգային անհամարութեան բոլոր մնացորդները հասարակական ու տնտեսական կյանքի բոլոր ճյուղերում և, ամենից առաջ, պլանաչափ կերպով արդյունաբերութիւնն արմատացնել ծայրերիցներում՝ գործարանները փոխադրելով հումքի աղբյուրների մոտ»: Այս դերեկտիվը կենսագործելով, Հայաստանի պայմաններում հանդեպ այն բանի, վոր զգալիորեն ամբլացավ Հայաստանի արդյունաբերութիւնն տեսակարար կշիռը վողջ ժողովրդական տնտեսութեան մեջ:

Այս նվաճումները մեզ մոտ ձեռք են բերվել յարված պայքարի պայմաններում, մի պայքար, վորն ուղղված ե յենդել կուսակցութեան հիմնական դժի անշեղ կիրառմանը, պայքար ընդդէմ ոպորտունիստական բոլոր դուշնի ու տեսակի դերքավորումներին:

Խորհրդային Միութեան մեջ, ինչպես և նրա անբաժանելի մասնիկը կազմող Խորհրդային Հայաստանում քիչ չեն յենդել դասակարգային թշնամու վործերը՝ կասեցնելու մեր հաղթական արշավը, կասեցնելու սոցիալիստական շինարարութեան աննախընթաց վերելքը: Սակայն կոմկուսակցութեան գլխավոր դժի միանգամայն ճիշտ լինե-

լը բանվոր դասակարգի և կոլխոզ գյուղացիության գլխա-
կից ու աշխտանքը և այն մատակարարությունը, վոր վա-
յելում ե կոմկուսակցությունը բանվոր դասակարգի բաղմա-
միլիոն մասնաշաղկապ, այն հիմնականն էլին, վոր հնարավոր
դարձրին ձեռք բերելու մեղ մոտ խոշորագույն նվաճում-
ներ:

Մինչդեռ արդյունաբերության և գյուղատնտեսության
ընդհանուր արտադրանքի մեջ արդյունաբերությունը հնգա-
մյակի առաջին տարում (1928/29) կազմում եր ընդամենը
25,8%, ապա 1931 թ. արդյունաբերության տեսակարար
կշիռը արդեն բարձրանում ե 42,4%-ի, իսկ ըստ 1932 թ. նը-
շումների բարձրանալու յե 52%-ի: Չպետք ե մոռանալ, վոր
կառուցվածքային այս փոփոխությունները ձեռք են բերված
գյուղատնտեսության արտադրանքի ընդհանուր աճման հետ
միաժամանակ, վորը (գյուղատնտեսական արտադրանքը)
1927—28 թ. 81.674.000 ուղբուց 1931 թ. հասնում ե
107.748.000 ուղբուց:

Հայաստանի արդյունաբերության ներդրումները տա-
րեցտարի պատկառելի աճում ունենալով՝ 1932 թ. չափա-
զանց հետ են թողնում կապիտալ ներդրումների այն չա-
փերը, վորոնք նշված էլին հնգամյա պլանում:

Մինչդեռ 1923—24—1927—28 թվականների 5 տարինե-
րում Հայաստանի արդյունաբերության և ելեկտրիֆիկա-
ցիայի մեջ ներդրված ե ընդամենը 22.182.000 ու., ապա
հնգամյակի առաջին յերեք տարիներում — 1928—29—1931
թ. թ.—ներդրված ե 64.554.000 ու.: Այս ներդրումներն
ըստ տարիների տալիս են վիթխարի աճում: Այսպես, 1928—29
տարում ներդրված ե 12.885.000 ու., 1929—30 տարում՝
22.521.000 ու. և 1931 թ.՝ 29.198.000 ու.: Ինչպես տեսնում
ենք, 1931 թ. ներդրումները 1930 թ. ներդրումների համե-
մատությամբ տալիս են 39,8 %-ով աճում:

Ժողովրդական տնտեսության աճման տապալիղում 1931
թվին ձեռք բերված այս հաջողություններին զուգընթաց,

մենք այդ տարին փակեցինք զղալի, իսկ մի շարք ճյուղե-
րում չափազանց խոշոր թերակատարումներով: Այդ ամբող-
ջապես վերաբերում ե նաև արդյունաբերությանը, ինչպես
պետական ցենզային, այնպես ել Հայաստաբկոոպի արդյունա-
բերության դժով:

Պետական արդյունաբերության ընդհանուր արտադրան-
քը դրամական արտահայտությամբ 1931 թ. պլանում նշված
եր 74.808.600 (1927/28 թ.) անփոփոխ գներով: Իսկ պլանի
կատարումը հավասարվում ե 58.888.700 ուղբուց: 1931 թ.
պլանի կատարումը 1929/30 թ. պլանի կատարման համեմա-
տությամբ տալիս ե աճում 39,0 տոկոսով: Արդյունաբերա-
կան ծրագրի կատարումը 1930 թ. տվյալների հետ համե-
մատելիս կատանանք հետևյալ պատկերը.

Ցենթակայության սխտեմ	1930 թ. փա- տական կա- պալ (ազար ո.)	1931 թ. փա- տարումը (հազար ո.)	1930 թ. հա- մա- մատությամբ
Հայաստանի ԺՏԳՆ . . .	5409,0	7397,4	136,7
Անդրկովկասի ԺՏԳՆ . . .	13,944,8	18963,5	136,0
ԽՍՀՄ-ի ԺՏԳՆ . . .	7594,0	9412,4	123,9
Մատակցվածատ . . .	3927,7	9364,2	238,8
Այլ ժողկոմա մներ . . .	11483,4	13860,2	120,7
Վոդյ արդյունաբերութ. .	42368,9	58887,7	139,0

Ինչպես տեսնում ենք, Հայաստանի տերիտորիայում
գտնվող պետական արդյունաբերությունը (ըստ շինարարու-
թյան բոլոր սխտեմների) տալիս ե զղալի աճում, վորը հիմ-
նականում հետևյալ պատկերն ունի, ըստ արդյունաբերական
ճյուղերի և ոբյեկտների.

1930 և 1931 թ. թ. ընդհանուր արտադրամեք
(հազար ռուբլիներով)

№	Արդ. ձյուղեր և ուղեկատներ	1930 թ.	1931 թ.	%	%
1	Պղնձի արդյունաբեր.	5783,0	7003,0	121,0	
2	Տեղ. սաթի	7865,1	11344,8	144,2	
3	Արթիկ-տուֆ	563,6	1303,8	231,3	
4	Կոստիկ	1718,9	3198,1	186,1	
5	Գինի-կոնյակի	6496,1	8051,0	122,0	
6	Կարբիտ	653,7	1187,5	181,6	
7	Մեխ-գործ.	845,5	1635,0	193,5	
8	Մետաղագործ.	615,4	1318,9	214,3	
9	Փայտամշակման	834,2	1185,4	143,8	
10	Կարբ.	1201,6	2218,5	184,2	

Այն արտադրական-ընդհանրական պետությունները, այն խանութային-ընդհանրական ու մարտական տեմպը, վերջին Հայաստանի բանվոր դասակարգը կուսակցության կի-ի անմիջական ղեկավարությամբ թեև անհանգիստ էր, բայց հանգամանակի յերբորդ տարին, այն անդուլ պայքարն ընդդեմ ամեն դուշին ուղղված, և բանվոր դասակարգի կազմակերպումը արդյունաբերության պլանների հաջող կատարման համար պայքարելու ուղղությամբ, վերջինս ուղեկցեց ամբողջ 1931 թվականին, ձեռք բերված նվաճումների ստույգ յերաձխիքն էլին հանդիսանում:

Առանձին ձեռնարկությունների բանվորների լայնածավալ պայքարը հանդիպական արդյունաբերական կազմելու, լարված, բայց միանգամայն իրագործելի ու ռեալ պլանների համար, վերջինս կազմակերպեց բանվոր դասակարգը դեռևս 1931 թ. սկզբին, հավաքական պայմանադրերի վերակերպման ժամանակ, դրան գույժնեց՝ պայքարը յերկու ֆրոնտի վրա և ընդդեմ առանձին տնտեսական միավորների մի քանի ողակների անշարժության, այդ ուղեկցողների վրա:

բանվորական կոլեկտիվի կողմից ռեալ պլանների կատարման համար կազմակերպված հաջող պայքարը, — այս ամենը հանդեպ հանդիպական արդյունաբերական նախաժամկետ կատարմանը: Հնգամյակը չորս տարում կատարելու համար մղվող պայքարի ենտուղիաստները Հայաստանի արդյունաբերության պատմության մեջ արձանագրեցին մի չարք պանծալի եջեր: Լենտեղստիլի տրեկտորի գործարանը, Կարի գործարանը, Պոլիգրաֆը, Ձեթ-ոճառը, — ահա ձեռնարկություններ, վերջինք բայլչեվիկյան տեմպերով են վայլում հնգամյակի առաջավոր չարքերում:

Այս նվաճումների ֆոնի վրա ցայտուն կերպով դժագրվում է մի չարք ձյուղերի և գործարանների հետամնացությունը 1931 թ. ընդհանուր արտադրանքի տարեկան պլանների կատարման հանդեպ: Հնգամյակի յերբորդ, վճռական տարում Հայաստանի արդյունաբերությունը 1930 թ. համեմատությամբ 39,0% —ի աճում տալով հանդերձ, 1931 թ. տարեկան ծրագիրը թերակատարեց 21,3% —ով, յերկրին չտալով 15.920.300 ռ.:

Կուսակցությունը և իշխանությունը, նշելով արդյունաբերության զգալի առաջընթացը 1930 թ. համեմատությամբ, չեն կարող ամբողջ բանվոր դասակարգի ուշադրությունը հրավիրել այն խայտառակ հետամնացության վրա, վոր մենք ունենք տարեկան արտադրական ծրագրի կատարման գործում, մանավանդ վոր այդ հետամնացությունն իբր զգալի մասում ընկնում է ծանր արդյունաբերությանը:

«Տալով արդյունաբերական արտադրանքի զգալի աճում, այդ նշանակում է արդյոք, թե մենք ոգտագործել ենք տնտեսության սոցիալիստական սիստեմի բոլոր հնարավորությունները: Վո՛չ, չի նշանակում: Ընդհակառակն, լիքվիմ ոգտագործելով բոլոր առավելություններն ու հնարավորությունները, ժողովրդական տնտեսությունը կկարողանար տալ աճման ավելի բարձր տեմպեր» («Պրավդա»): Տեղ-տեղ

գերակատարելով պլանային նշումներն ու նույնիսկ Հանդիսական պլանները, փորձախնայ մենք տեսնում ենք մեր մի շարք գործարարների եկամուտների մաս, Հայաստանի արդյունաբերությունը կարող էր կատարել և պետք է կատարել մեր միանգամայն ռեալ պլանների արտադրական առաջադրությունները:

Վերադառնալով 1929/30 տարվա պլանային առաջադրություններին արտադրական գույքանիշների թերակատարման պատճառները, րնկ. Ստալինն ասում էր.

«Երբ մոտ անոթայ տարի կալի՞ն որսկիտիմ Հնարարությունները պլանն սմբողմապես կատարելու համար: Այո՛, կալին: Իսկ ինչո՞ւ, հարգ ե ծաղում, մենք չկատարեցինք ամբողջ տարվա պլանը: Ի՞նչն էր խանգարում: Ի՞նչն էր պակասում: Պակասում էր յեղում հնարամորուքություններն ռադարդներու կարողությունը. պակասում էր գործարաններն ու համբերը փշտ դեկամարելու կարողությունը»:

Այո, վերադառնալով 1931 թ. արդյունաբերության թերակատարման պատճառները, մենք պարտավոր ենք ասել, փոր մեր պլանները ռեալ էլին, փոր կալին բոլոր որսկիտիմ պայմաններն ու Հնարարությունները արդյունաբերության կատարման համար և փոր թերակատարման պատճառները թաղմած են հենց ձեռնարկություններում, թաղմած են նոր պլաններում, նոր ձևով դեկամարելու անկարողություն մեջ:

Ընկ. Ստալինի վեց պատմական գույքումները, փորունը պետք է անկյունաքարը կաղմեյին այն ամբողջ աշխատանքի, փոր մենք կատարում էլինք մասնաներին մեր պլանների կատարման համար հաճող պայքարի հանելու, մեր տեմպերը յուրացնելու ուղղությամբ, — մեր արդյունաբերությունը չկարողացավ յուրացնել բախարար չափով:

Աշխատանքի և աշխատավարձի կազմակերպումը, դիմագրկության և մոնր-բուրժուական հավասարեցում դեմ պայքարելը տարեկան ծրագիրը չկատարող ձեռնարկների,

կուսակցական, արհեստակցական և տնտեսական մարմինների ուշադրության կենտրոնակետը չկազմեցին:

Սրանով և միայն սրանով պետք է և կարելի չե բացատրել մեր արդյունաբերության մի շարք ճյուղերում առաջացած այնքան զգալի ձեղքվածքների պատճառները:

Արդյունաբերության տարեկան ծրագրերի կատարումն ըստ յենթակայության հետևյալ պատկերն ունի (հազար ռուբլիներով).

Յենթակայության սխեմ	1931 թ. պլանը (հազար ռուբլ.)	1931 թ. պլանի կատար. (հազար ռ.)	Կատարման %	%-ը
Հսկւ ժՏԳԽ . . .	8632,4	7397,4	85,7	
Անդրկովկասյան ժՏԳԽ . . .	24593,0	18963,5	77,1	
ԽՍՀՄ ժՏԳԽ . . .	15182,6	9412,4	62,0	
Մատակցված առկ արդյուն. . .	10998,6	9364,2	85,1	
Այլ ժողկոմատների արդ. . .	15402,0	13860,2	90,0	
Ամբողջ պետարդյունաբ. . .	74808,6	58887,7	78,7	

Պլանների հանդեպ հետամնացությունը և այդ հետամնացությունների քանակն ըստ առանձին ճյուղերի ու ձեռնարկությունների յերևում է հետևյալ աղյուսակից.

Արդյունաբերական ճյուղ.	Պլանը (հազար ռ.)	Կատարման (հազար ռ.)	Կատարման %	%-ը
Պլինն . . .	12883,0	7003,0	54,4	
Տեքստիլ . . .	12967,0	11344,8	87,5	
Կաշի . . .	3085,9	2624,0	85,0	
Ա. թիկ-տուֆ . . .	2158,9	1303,8	60,4	
Պիմզա . . .	5253,0	2612,0	49,7	
Հեղինարդե ձեռնարկութ. . .	1308,2	919,9	70,3	
Մեխզործարան . . .	2610,0	1635,0	62,6	

Խոսելով ընդհանուր արտադրանքի պլանի կատարման դործում յետ մնացած ձեռնարկությունների մասին, հարկաւոր է առանձնապես նշել, փոր մեր այնպիսի խոշոր նորակառույցներում, ինչպիսիք են Զորագետը, Յեմենտի դործարանը.

նը և Ղարաքիլիսայի Յիանամիդի գործարանը, շնորհիվ այն հանգամանքի, վոր մենք չկարողացանք ժամանակին ավարտել նրանց շինարարությունը ԿԿ-ի և Ժողկոմխորհի վորոշման մեջ նշված պատճառներով, յերկիրը հենց նրանցից մեկ-այն չստացավ 1.5 միլ. ռուբլու ընդհանուր արտադրանք:

Վոչ-հմուտ, յերբեմն վոչ-բայլ լիկյան դերձավորումը բանուծի հավաքագրման, նրանց նպատակահարմար դասավորման և աշխատանքի ճիշտ կազմակերպման հարցերում մեր մի շարք ձեռնարկություններում ստեղծեցին բանուծի արհեստական պակաս: Վորովհետև, ինչպես այդ ցույց է տրված կուտակցության դերեկտիվների մեջ, մեղ մոտ չկա և չի կարող լինել բանուծի պակաս, իսկ փաստորեն այդ պակասը պետք է վերադրել այն հանգամանքին, վոր մենք վատ աշխատեցինք աշխատանքը կուտակեցություններում կազմակերպելու ուղղությամբ, վոր մենք չկարողացանք ճիշտ դասավորել առկա բանվորական կադրերը: Վոչ մի կերպ չի կարելի արդարացնել այնպիսի մի դրություն, յերբ մեր մի շարք ձեռնարկություններ մի շարք ամիսների ընթացքում բանուծի ավելցուկ ունեցան, այն ժամանակ, յերբ հարեան ձեռնարկությունները բանուծի պակաս եյին զգում:

Մեր ձեռնարկությունների և գործարանների բանուծով ապահովված լինելը հետևյալ պատկերն է ներկայացնում.

	Միջին տար. ըստ արդիւն- պլանի	Փաստորեն 11 ամսում	Արդիւնավա- նի տո- սայն հարաբերութ
Պիւնձ	2889	2496	100,3
Պեմզա	338	284	84,0
Տուֆ	860	773	89,8
Մերգործարան	335	251	74,9
Կաշի	111	117	105,4
Կարի	230	226	98,3
Միախոտի	171	158	92,4
Կոնսերվի	502	683	136,0
Փայտաշակման	199	190	95,6

ԽՍՀՄ ԺՏԳՈ-ի յենթակա արդյունաբերության գծով, ըստ 1931 թ. արդիւնպլանի, բանվորների տարեկան միջին թիվը պետք է կազմեր 2688 հ., փաստորեն յեղել է 2686 հ., այդ թվում առ 1-ը դեկտեմբերի 1931 թ. կար 3064 հ.:

ՀՍՍՀ ԺՏԳՈ-ին յենթակա արդյունաբերության գծով պլանի համաձայն 1159 հոգի ունենալու վոխարեն 11 ամսվա ընթացքում միջին հաշվով տվյալ ձեռնարկություններում կար ընդամենը 1003 բանվոր, վորը կազմում է պլանի 84,5%-ը: Իսկ առ 1-ը դեկտեմբերի 1931 թ. Հայաստանի ԺՏԳՈ-ի արդյունաբերության մեջ զբաղված բանվորների թիվը հասնում էր 1160 հոգու:

Մատոցկոմատի արդյունաբերության գծով բանուծով ապահովված լինելու դրությունը բավարար էր (վատ ավել- ցուկի իմաստով). մինչդեռ ըստ պլանի 11 ամսում միջին հաշվով պետք է լիներ 905 բանվոր, փաստորեն յեղել է 1062 հոգի, վորը 11 ամսվա պլանը գերազանցում էր 17,3%-ով:

Բանուծի պլանը գերազանցող և դրանով մասամբ մյուս ձեռնարկություններում բանուծի պակաս ստեղծող ձեռնարկությունների շարքը պետք է դասել Ալլահվերդու պղնձա- ձուլարանը, վոր պլանից 24%-ով ավելի բանուծ ուներ, Յե- րեվանի Փայտաշակման գործարանը՝ 6,8%-ով ավելի, Մերգործարան՝ 5,4%, Կոնսերվի գործարան՝ 36%, Յերե- վանի և Ջաջուռի կրի գործարանները և այլն: Բանուծի այս գերազանցյալ հավաքի փաստերը հետևանք են տվյալ գոր- ծարանների վարչությունների ամենավատ աշխատանքի, վորովհետև աշխատանքի այդպիսի պրակտիկան բանուծի արհեստական պակաս ստեղծելու պատճառներից մեկն է:

ԽՍՀՄ ԺՏԳՈ-ին յենթակա արդյունաբերությունը բանուծի հավաքի պլանը կատարելով դրեթե հարյուր տո- կոսով (99,9), թերակատարել է աշխատած մարդ-որրի պլանը 11 ամսում 28.473 մարդ-որով, Հայաստանի ԺՏԳՈ-ին յենթակա արդյունաբերությունը՝ 26572 մարդ-որով, իսկ

Մատթոյկոմատին յենթակա արդյունաբերութիւնը՝ (բանութը 17.3%-ով ավելի ունենալով հանդերձ, աշխատած մարդ-որերի պլանային առաջադրութիւնը գերակատարել է միայն 4.8%-ով) :

Առկա բանվորական կադրերի և նրանց աշխատանքի ոգտագործման միջև յեղած հսկայական խզումը դալիս է ասելու, վոր քիչ ուշադրութիւն է դարձված բանութի ճիշտ դասավորմանը, դիմագրկութեան վերացմանը և բանութի ռացիոնալ ոգտագործմանը :

Աշխատանքի դալու վերաբերյալ տվյալները, պարապուրդները և գործալքումները Հայաստանի ցենդային արդյունաբերութեան գծով 1931 թ. առաջին կիսամյակում բնորոշում են պարապուրդները վերացնելու և գործալքումները պակասեցնելու ուղղութեամբ կատարված անախանձելի աշխատանքը : Այդ տվյալները նախորդ տարվա համապատասխան կիսամյակի տվյալներէ հետ համեմատելով կատանանք հետևյալ պատկերը :

Մեկ բանվորի չոգագործած բանվորական ուեքի բանակը
բաւ պատհառների

Արդյունաբերական ճյուղեր	Աշխատատարակ. և այլ կադմակերգ.		Հերթական արձառուրդներ		Հիվանդ. և ծննդաբերութեան		Գործալքումներ					
	1930	1931	1930	1931	1930	1931	Ընդամենը	Անհարգելի պատճառներով	Հարգելի պատճառներով	1930	1931	
Ընդամենը	1,44	1,26	4,02	4,64	7,44	9,70	2,14	3,28	4,52	21,4	1,62	1,14
Ա. Երկ.	1,27	1,76	5,73	5,63	5,26	7,92	2,86	4,27	2,22	2,99	0,61	1,28
Բ. Երկ.	1,65	0,82	2,77	3,64	9,93	11,29	1,36	2,39	0,75	1,51	0,61	0,80

Այս Աղուակից ամբողջ ալնհայտութեամբ յերևում է, վոր ստորին արձմիութենական, կուսակցական և կոմյերիտական կադմակերպութիւնների պայքարը չի արվել գործա-

լքումներն առավելադուլն չալիով կրճատելու ուղղութեամբ : 1931 թ. առաջին կիսամյակում անհարգելի պատճառներով գործալքումները մեկ բանվորի նկատմամբ 1930 թ. առաջին կիսամյակի 1.52-ից ավելացան 2.24 բանվորական որվա, մի հանգամանք, վոր հարյուր հաղարավոր ռուրլիներ նստեց Հայաստանի պետական ցենդային արդյունաբերութեան վրա, չորհիվ միմիայն մեր թույլ պայքարի :

Այս հալի մեջ գեուես չեն մտնում մեկ բանվորին ընկնող պարապուրդային որերը, վորոնք 1930 թ. առաջին կիսամյակի 0.04 բանվորական որից 1931 թ. առաջին կիսամյակում հասնում են 0.1 բանվորական որվա :

Ահա թե ինչու մեր բոլոր տնտեսական, արձմիութենական և կուսակցական կադմակերպութիւնների ուշադրութեան կենտրոնակետը պետք է կադմեն դիմագրկութեան, պարապուրդների և գործալքումների վերացման հարցերը—աշխատանքի ճիշտ կադմակերպման հարցերը : Յեւ ինչքան ավելի չուտ մենք կարողանանք մարտական տեմպերով առաջ մղել ընկ. Ստալինի 6 ցուցմունքների իրագործումն, այնքան ավելի չուտ մենք կլուծենք բանութի պակասը լրացնելու հարցերը և դրանով ավելի ևս կարագացնենք սոցիալիստական կուտակման տեմպերը :

Չնայած բնակարանային տարածութեան գդալի աճման, արդյունաբերութիւնն այնուամենայնիվ չկարողացավ ընթացիկ տարում բալլէիկյան տեմպերով իրացնել բնակչինարարութեան բոլոր ներդրումները, և այն ժամանակ, յերբ մեր մի շարք ձեռնարկութիւններում մենք բնակարանային բաւվական գոհացուցիչ դրութիւն ունենք՝ բանվորներին բնակարաններով ապահովելու իմաստով, սակայն մի շարք ձեռնարկների գծով շինարարութեան հատկացումների իրացումը յետ է մնում :

Իբրև բնակչինարարութեան հատկացումների իրացման տեմպերի բնորոշ որինակ, բերենք յերկու ձեռնարկութիւն— Հայպետշինի գծով, այն ժամանակ, յերբ ամբողջ շինարար-

բախան ծրագիրն իրացված եր 40 %-ով (ըստ նախնական տվյալների), այդ թվում բնակչին առարուծյան հատկացումներն իրացված են 50 %-ով: Բնակչին կուտակի գծով (վորը գրեթե բացառապես դրացված է բնակարանային շինարարությամբ), տարեկան շինարարական ծրագիրը ֆինանսական արտահայտությամբ իրացված է 80 %-ով, իսկ ծավալային ցուցանիշներին դժով, վորակական ցուցանիշներին վատ կատարման և շինարարության թանգացման հետևանքով, պլանը կատարված է 50—55 %-ով:

Չնայած այս խոշոր բացերին, բնակչին արար. ծավալման գծով 1931 թ. բանվորական բնակարաններ են կառուցված 51.000 քառ. մետր, վորը 1929/30 թ. համեմատությամբ կազմում է 111 %:

Գոյություն ունեցող հաշվետվությունը հնարավորություն է տալիս տալ արտադրանքի վորակի խնդրում ընթացիկ տարում կատարված փոփոխությունների պատկերը արդյունաբերության առանձին ճյուղերում: Առանձին ձեռնարկությունների վերաբերյալ հատուկոր տվյալները խոսում են նրանց արտադրանքի վատ վորակի մասին: Մեխգործարանի արտադրանքի վորակի բացառիկ վատ դրությունը, բարդացնելով նրանց (արտադրանքի) ոգտադործումը մի շարք ամիսների ընթացքում, խանգարեց Ֆերևանի Գաձի ու Կրի գործարանների գործարկումը, և ընդհանրապես ընթացիկ տարում Մեխգործարանի արտադրանքի վորակը շատ վատ եր: Ձգալի չափով վատացավ նաև շինարարության համար մատակարարվող քարերի վորակը, (անհամաչափ, սահմանված ստանդարտներին չհամապատասխանող և այլն):

Միայն տի արդյունաբերության արտադրանքի վորակի վատթարացումը վարչությունը բացատրում է ասորալմենտով, վորը ճիշտ է: Կաշվարդյունաբերության արտադրանքի վորակի վատթարացումը բացատրվում է այն բանով, վոր վարչությունը հարկ յեղած աշխատանքը էի կատարել:

Զեմիական նյութերն ու լավ վորակի հումք ասպհոմելու համար:

Պարզ է, վոր վատ աշխատանքը վորակական ցուցանիշներին դժով էր կարող չանդրադառնալ արտադրանքի վորակին ընարթեքի հարցերի վրա: Կուսակցության և կառավարության դերեկտիվը արդյունաբերական արտադրանքի ինքնարթեքի իջեցման մասին (7 %-ով) վոչ միայն չկատարվեց, այլև դերադանցեց 1930 թ. հաշվետու տվյալները: Չախազանց վատ է դրված ինքնարթեքի իջեցման աշխատանքը պղնձարդյունաբերության մեջ, ուր 1 տոնն պղնձի ինքնարթեքն ըստ նախնական տվյալների դերադանցում է պլանային առաջադրանքը Չանդեդուրի կոմբինատում՝ 70 %-ով (առանց հաշվելու աղնիվ մետաղների սարունակությունը), իսկ Ալլահվերդու կոմբինատում՝ 20—25 %-ով:

Հաշվետվության դրությունը մեզ հնարավորություն էի տալիս լրիվ տվյալներ բերել արդյունաբերական արտադրանքի ինքնարթեքի դրության մասին. պարզ է մեկ բան, այն, վոր վորակական ցուցանիշներին ֆորոտում մենք խայտառակ կերպով հետ ենք մնացել: Ի դեպ՝ նկատենք, վոր հիմնականում այդ պետք է վերադրել այն բանին, վոր արհմիութենական և կուսակցական կազմակերպությունները վատ են աշխատել մասնաներին ինքնարթեքի իջեցման համար մղվող պայքարի շուրջը մորիլիզացիայի յենթարկելու ուղղությամբ, այլապես ինչով բացատրել, վոր, որինակ՝ Կաշեգործարանում, ինքնարթեքը 1930 թ. համեմատությամբ բարձրացավ 10 տոկոսով: Ինքնարթեքի իջեցման աշխատանքն առավել ևս վատ է Մեխգործարանում: Արտադրական ծրագրի կատարման այտեղ մինչև այժմ էլ տրվում է արթեքային արտահայտությամբ, ահա թե ինչով ինքնարթեքի բարձրացումը «դրականորեն» է արտահայտվում արդֆինալանի արթեքային կատարման վրա:

Հնդամյակի վերջին տարին, հանդիսանալով բայլեվի-

կյան տեմպերի մի տարի՝ պետք է լինի միաժամանակ վորահան ցուցանիշների լավագույն կատարման տարի:

Աշխատանքի արտադրողականությունը 1931 թ., չնայած աշխատանքի կադմակերպման մի շարք թերություններին, 1930 թ. համեմատությունում տալիս է զգալի աճում: Արդյունաբերության հիմնական ճյուղերում աշխատանքի արտադրողականության բարձրացման դինամիկան հնգամյակի առաջին 3 տարիներում տալիս է հետևյալ պատկերը.

Մեկ բանվորի արտադրանքը հազար ռուբլիներով (նախնական տվյալներով ըստ տարիների)

	Ցուցանիշներ	28/29	1 9 3 0 թ.			1 9 3 1 թ.	
		Բացարձակ	Բացարձակ	Նախորդ տար. տոկոս. արտահայտ.	Բացարձակ	Նախորդ տար. վա տոկ. համեմատ.	
1	Պղինձ . . .	2833	2819	99.5	3004	106.6	
2	Ուրթիկ-տուֆ . . .	163	715	438,7	1659	231,7	
3	Հայ-պեմզա . . .	2984	7717	265,7	9133	118,3	
4	Մեքենաշինարար . . .	2778	4901	176,4	6540	133,4	
5	Տեքստիլ . . .	2360	2666	113,0	3007	112,8	
6	Կաշվի . . .	13625	21231	158,5	21161	99,4	
7	Կոնսերվի . . .	4763	3906	82,0	4669	119,5	
8	Ծխախոտի . . .	3 00	5913	184,8	8192	138,4	
9	Գինի-սպիրտ կոմ. . .	35133	38349	109,02	49091	128,0	

Ինչպես յերևում է այս աղյուսակից, մենք վերխարի աճում ունենք այն ուրյեկտների դժով, վորոնք խոշոր տեսակաւորար կշիռ ունեն Հայաստանի վորջ արդյունաբերության մեջ. պղնձի դժով՝ 1930 թ. համեմատությամբ աճում 036.6%-ով, տեքստիլ՝ 12,8 %, Արթիկ-տուֆ՝ 131.7%, կոնսերվ՝ 19,5 %-ով և այլն:

Չնայած այս խոշոր նվաճումներին, մենք խորհրդային հասարակարկության ուղարդությունը պետք է հրավիրենք այն հանգամանքի վրա, վոր տարեկան ծրարրի կատարումը գրեթե ամբողջ տարում ընթանում էր ամենամայա ճեղքվածքներով: Դիչ թե շատ ըավարար է պատկերը Մատոնգ-

կոմատի արդյունաբերության դժով, ուր աշխատանքի արտադրողականության պլանը կատարված է 94,5 տոկոսով:

Աշխատանքի արտադրողականության տարեկան ծրարրի կատարումը տալիս է հետևյալ պատկերը

Մեկ բանվորի միջին ամսական արտադրանքը (ռուբլիներով)

	Ճյուղեր	1931 թ. պլան	1931 թ. կատարում	կատարման %
1	Պղնձի հանույթ . . .	292,9	213,7	73,0
2	պղնձաձուլում . . .	627,0	306,8	48,9
3	Փայտամշակման գործ . . .	547,3	520,1	95,0
4	Արթիկ-տուֆ . . .	179,1	133,1	77,1
5	Հայ-պեմզա . . .	1298,9	898,2	69,2
6	Լեռնարդի ձեռնարկութ. . .	226,1	193,1	85,4
7	Մեքենաշինարար . . .	612,7	544,4	88,8
8	Կաշի . . .	2403,3	1759,9	73,2
9	Կարորդ . . .	590,0	815,6	138,2
10	Ծխախոտ . . .	657,4	682,6	103,8
11	Կոնսերվի . . .	735,2	389,1	53,0

Աշխատանքի արտադրողականության նման դրությունը հետագայում այլևս հանդուրժելի է: Աշխատանքի արտադրողականության պլանի մեծ թերակատարումը բացատրվում է արտադրության մեքենայացման ուղղության մատարված վատ աշխատանքով, ռացիոնալիզատորական աշխատանքի պլանի թերակատարումով և բանուծի գզալի ավելցուկով: Արդյունաբերության դժով ռացիոնալիզատորական միջոցառումների համար բաց թողնված գումարներն ամբողջությամբ չեն իրացված, ահա թե ինչու բանուծի առկա կադրերի վատ ոգտարդրման հետ միասին աշխատանքի արտադրողականության պլանը կատարված է զգալի ճեղքվածքներով:

Ի դեպ նկատենք, վոր աշխատանքի արտադրողականության հարցերն ամբողջ սրությամբ իրենց մանրամասն լու-

ծումը պետք է դնեն 1932 թ. արդյունաբերության մեջ: Աշխատանքի արտադրողականության այնպիսի հասկացողություն, յերբ ամենակոպիտ յեղանակով ձեռնարկության ընդհանուր արտադրանքը բաժանվում է բանվորների վրա և ստացվում է աշխատանքի արտադրողականություն, խորհրդային եկոնոմիկայում վոչ մի կերպ տեղ չպետք է ունենա: Աշխատանքի արտադրողականության ծրագրի կատարումը միջին որական արտահայտությամբ 1931 թ. տալիս է աճման ավելի բարձր տոկոս, քան միջին ամսական աճումը, և այդ միանգամայն բացատրելի յե, վորովհետև պարապուրդի ու գործալքման որերն իջեցնում են աշխատանքի արտադրողականության որական տոկոսը, յերբ այն հաշվում ենք ամսվա նկատմամբ: Աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու գործին վճռականորեն զարկ պետք է տան տեխնիկայի տիրապետումը, պայքարը հոսունության դեմ, պրոգրեսիվ գործավարձի կիրառումը, բանվորներին կենցաղի պայմաններին հետագա նյութական-կենցաղային բարելավումը և այլն: Այդ իմաստով արդյունաբերության 1931 թ. աշխատանքի արդյունքները գալիս են ասելու, վոր կուսակցությունը և բանվոր դասակարգն ամբողջ լայնությամբ դնելով աշխատանքի ճիշտ վազմակերպման հարցերը, զգալի հաջողություններ ձեռք բերին ինչպես չվորդների, կորգորդների և հոսունության դեմ պայքարելու, այնպես էլ արտադրության մեջ աշխատանքի շատ ավելի լավ պայմաններ ստեղծելու գործում: Վոչ մի դեպքում չպետք է թերադնահատել այն քաղաքական նշանակությունը, վոր ունի բանվորների ինքնամրացումը մինչև հնդամյակի վերջը և վորը ծավալել են բանվորները վորպես լայն կամպանիա, հոսունությունը վերացնելու համար:

Բանվորների ինքնամրացումը 15 միության դժով ու 1-ը հոկտեմբերի հետեյալ պատկերն ունի: Արդյունաբերական ձեռնարկություններում դրադված 15.535 բանվորներ

րից, ինժինեթ-տեխնիկական անձնակազմից և ծառայողներից՝ մինչև հնդամյակի վերջն ինքնամրացված են 7925 հոգի, կամ 51,7 տոկոս, այդ քվում՝ 13.552 բանվորներից ինքնամրացված են 7156 հոգի կամ 52,8 տոկոսը, 723 ձճ աշխատողներից՝ 357 հ. կամ 49,5 տոկոսը: Առանձին ճյուղերում ինքնամրացումը հետևյալ պատկերն ունի—փայտամշակման դժով՝ 79 տոկ., մեքենաշինարարական՝ 52,7 տոկ., սղինձի (հանքահանում և սղինձաձուլում)՝ 55,4 տոկ., մանվածքային-գործվածքային՝ 39 տոկ., մետաքսագործական՝ 74, տոկ., տրիկոտաժ, 65,3 տոկ., կաշվադե՝ 79,9 տոկ., կարադե՝ 87,5 տոկ., ծխախոտի՝ 42,9 տոկ. և շինանյութերի արտադրության՝ 55 տոկ.: Բանվորների ինքնամրացման հետագա կիրառումը բանուժի հոսունությունը վերացնելու լավագույն միջոցներից մեկն է:

Գործավարձ մտցնելու հարցերը, վորոնք պետք է բարձրացնեն աշխատանքի արտադրողականությունը և բանվորների աշխատավարձը, չնայած կուսակցության մի շարք դիբեկտիվներին, մինչև այժմ պատշաճ տեղ չեն գրավել մեր արդյունաբերության մեջ:

Համեմատելով գործարքային բանվորական ժամերի թիվը փաստորեն աշխատած մարդ-ժամերի հետ 1930 և 1931 թ. ողոսաոս ամիսներին, հետեյալ ձեռնարկություններում մենք այսպիսի մի պատկեր կստանանք.

(Համապատասխան աղյուսակը տես 22-րդ էջ)

Անխառնվող գործարարային ժամերի տոկոսը 1930 թվ 1931 թ.
նոյսնոս ամիսներին

Արտագրող ընդհանուր	1930 թ. ողոստոս		1931 թ. ողոստոս	
	Աշխատած գործարար- ային ժամեր թիվը	Փաստորեն աշխատած մարդ-ժամեր ի տոկոսա- յին հարաբեր.	Աշխատած գործարար- ային ժամեր թիվը	Փաստորեն աշխատած մարդ-ժ թի համեմատ
Գունավոր մետաղ. ձուլ.	9344	15,2	18043	23,40
Ոճառի գործարար . . .	416	11,9	4923	100,0
Կաշվի գործարար . . .	8310	46,5	12662	76,7
Ծանվածքային գործված.	177214	52,3	127150	40,8
Կանսերվի գործարար . .	—	—	18720	11,8
Կարի	31276	89,0	29093	90,1
Տրեկտորի	54175	60,8	45527	63,2

Վերլուծելով այս դրույթունը՝ մենք դալիս ենք այն յեղ-
րակացության, վոր համապատասխան կադմակերպություն-
ները գործարարի առավելագույն արմատացմանը հարկ յե-
ղած ուշադրությունը չեն դարձրել: Մեր աճման մարտական
տեմպերին գործարարի անցկացման նունայիսի տեմպեր
չուղեկցեցին: Իսկ մի շարք ճյուղերում ձեռնարկություններ-
րի մի մասը վորոչ չափով հանձնեց նախորդ տարվա տեմպե-
րը, 1931 թ. պակասեցնելով գործարարային ժամերի թիվը:
Ի դեպ նկատենք, վոր մի շարք ձեռնարկություններում գոր-
ծարարը մասամբ ձեռնարկներն է անցկացված, թեկուզ
հենց նրա համար, վոր աշխատավարձը տրվում է վոր թե
ըստ աշխատանքի արդյունքների, այլ տարիֆային դրույթ-
ներով և այս պես կոչված միջին աշխատավարձի համեմատ:

Այս աշխատության ծավալը հնարավորություն չի տա-
լիս ամբողջութամբ լուսարանել աշխատանքի կադմակերպ-
ման բոլոր հարցերը: Այստեղ մենք կանգ կառնենք միայն
անընդհատի, 7-ժամյա բանվորական որվա և աշխատավար-
ձի հարցերի վրա:

1931 թվականին շարունակվեց մեր ձեռնարկություններ-

րի փոխանցումը 7-ժամյա բանվորական որվա: Առ 1-ը հու-
լիսի ցենդային արդյունաբերության մեջ դրադված 11.887
հոգուց 7-ժամյա բանվորական որվա ելին անցկացված 7667
հոգի, կամ 64,5 տոկոսը: 7-ժամյա բանվորական որվա փո-
խանցումը շարունակվեց նաև յերկրորդ կիսամյակում, յերբ
7-ժամյա բանվորական որվա փոխարկվեցին Ձեթ-ոճառ
գործարարը և մի շարք այլ ձեռնարկություններ:

Նույն ժամանակաշրջանում անընդհատ արտադրական չա-
բաթվա յեր անցել բանվորների 66.7 տոկոսը: Նկատենք,
վոր ընկ. Ստալինի հայտնի յեղութից հետո մի քանի ձեռ-
նարկություններ անցկացվեցին ընդհատ հնգորյակի՝ դիմա-
դրկության դեմ հաջողությամբ պայքարելու և բանուժը
ճիշտ դասավորելու համար: Պարզ է, վոր այստեղից չի հե-
տևում, թե ընդհատ հնգորյակի անցկացվելու յենթակա յեն
բոլոր անընդհատ աշխատող ձեռնարկությունները, վորով-
հետև զ...սոցիալիստական դարգացման հետագա առաջ-
խաղացման և արագացման գործում կարևորագույն ռեզերվ է
հանդիսանում առավելագույն չափով ոգտագործել արդյու-
նաբերության գործող սարքավորումը, վոր ներկայումս
միանգամայն անբավարար է ոգտագործվում, ինչպես նաև
արմատացնել նոր տեխնիկան» (XVI կուսհամագումարի՝
«Հնգամյա պլանի կատարման մասին» գեկուցման առթիվ
ընդունված բանաձևից):

Այստեղից պարզվ յարգությամբ հետևում է այն, վոր
ձեռնարկություններն անընդհատ հնգորյա շաբաթի անցկաց-
նելը պետք է կատարվի նաև հետագայում, անպայման նա-
խապատրաստելով տվյալ ձեռնարկությունը, դիմադրկու-
թյունը վերացնելու ուղղությամբ՝ ձեռնարկություն-
ները յերեք հերթի աշխատանքի փոխարկելով, չորս դրաֆի-
կային հանգստյան օրեր անցկացնելով և այլն:

Աշխատավարձի ավելացման 1921 թ. պլանային առա-
ջադրությունների կատարումը չի կարելի բերել աշխատան-
քի տվյալ ստադիայում, մանավանդ առաջատար պրոֆեսիա-

ների բանվորները նկատմամբ: Յենգային արդյունաբերության մեջ դրադված բանվորների աշխատավարձի սպասվող ալիքացումը կադմում է 18,1 տոկոս, մինչդեռ 1928-29 թ. այդ ալիքացումն արտահայտվում էր 9 տոկոսով, 1929-30 թ.՝ 10,3 տոկոսով: «Միջին կշռի» համեմատ աշխատավարձի հանրածանոթ հաշվարկումը չի կարող տալ մեզ առաջատար պրոֆեսիաների բանվորների աշխատավարձի ալիքացման պատկերը:

ՀԱՄԿԻՍ-ի հին դեկավարության ոստիկանական դիրքավորումն աշխատավարձի հարցերում հավասարեցման դիրքավորում տալով, դրանով իսկ կատարում էր Տրոյկու հայտնի թեզիսներն այն մասին, թե առաջիկայում էս մեզ մոտ աշխատանքի վարձատրման գործում՝ պետք է իշխի հավասարեցումը: Այս դիրքավորումը քաղաքականապես արդեն իսկ ջախջախված է, մեր կադմակերպություններին մնում է տեղում մարտական տեմպերով վերացնել հավասարեցումը և աշխատանքի լավագույն վարձատրություն սահմանել՝ հարվածային տեմպերի, աշխատանքի վորակի, աշխատանքի արդյունքի համար:

Հնգամյակի համար, արդֆինսյանի համար պայքարելը պահանջում է հավասարեցման վերացման ամենամարտական աշխատանք, վողջ արդյունաբերության մեջ դրադված բանվորների աշխատավարձի ընդհանուր ֆոնդի սահմաններում ալիքի մեծ՝ չափով բարձրացնելու առաջատար պրոֆեսիաների բանվորների աշխատավարձը:

Ահա թե ինչու «...ինչքան ալիքի համարձակ մենք դուրս գանք այդ ուղին, այնքան լավ, վորովհետև դրանումն է բանուժի հոսունության վերացման հիմնական միջոցը, իսկ այդ գործում խնայողություն անել, ասել է՝ հանցագործություն կատարել, դեմ գնալ մեր սոցիալիստական ինդուստրիայի շահերին» (Ստալին):

Հավասարեցման վերացման համար պրոֆկադմակերպությունների կողմից ծավալված պայքարը պետք է վեր-

ցնի ալիքի մարտական տեմպեր, հիմնվելով ընկ. Ստալինի ցուցումների վրա, վորովհետև ընկ. Ստալինի այդ հայտնի ցուցումների կիրառումով, և միայն դրանով, կկարողանանք ամենակարճ ժամանակամիջոցում աննախընթաց բարձր մակարդակի վոխադրել աշխատանքի արտադրողականությունը, ամբողջապես վերացնել հոսունությունը և աշխատանքի արդյունքների համեմատ վարձատրել այն բանալիներին, վորոնք ընթանում են սոցիալիզմի հաղթարշավի առաջին շարքերում: Վոչ մի դեպքում չպետք է մոռանալ, վոր աշխատանքի ճիշտ կադմակերպումը հիմնական մոմենտներից մեկն է հանդիսանում մեր բոլոր «թաղնված» հնարավորությունների ողջագործման խնդրում աշխատանքի արտադրողականության աննախընթաց բարձրացման և բանավոր դասակարգի նյութական-կենցաղային պայմանների հետագա բարելավման ուղղությամբ:

Հնգամյակի կատարման ու գերակատարման համար, արդֆինսյանի, հանդիսական ցուցանիշների համար մղվող պայքարին, ինչպես ասացինք, ուղեկցեց քաղաքականապես բարձրացած բանվոր դասակարգի արտադրական ակտիվությունը, վորպիսին դրսևորվեց սոցիալիստական մրցման հզոր ու մասսայական շարժումով:

Սոցմրցումը ժողովրդատնտեսական սլանի կատարման հզոր լծակը հանդիսացավ. նա միաժամանակ հանդիսանում է «պրոլետարիատին սոցիալիստական դաստիարակություն տալու և լայն մասսաներին տնտեսական կառավարման գործին ներդրավելու կարևորագույն մեթոդներից մեկը...» (ՀամԿ(բ)ԿԿ-ի 1929 թ. մայիսյան վորոչումից), վորովհետև սոցմրցումը պետք է ամենակարճ ժամանակամիջոցում դաստիարակի վերջին տարիներս գործարանները յեկած բազմաթիվ մասսաներին: Լրացած 1931 տարին անցկացավ սոցմրցման ու հարվածայնության հետագա ծավալման, նրա բարձրագույն ձևերի աճման և մեծ թվով բանվորների ու ծառայողների ներդրման նշանաբանով: Սոցմրցման և հար-

վածաշնության ընդգրկումը 15 միության գծով առ 1-ը հոկտեմբերի 1931 թ., սպացույց և այն խոշոր նվաճումների, վոր ձեռք բերեց կուսակցությունը վերջին տարվա ընթացքում: Բոլոր գրառված բանվորներից հարվածային են 69,1 տոկոսը, այդ թվում կուսակցականները՝ 81,5 տոկոս, կոմյերիտականները՝ 77,3 տոկոս:

Չնայած կուսակցականները և կոմյերիտականները գերակշռում են սոցմրցմամբ ու հարվածաշնությամբ ընդգրկված բանվորների ընդհանուր թվում, սակայն պետք է ամբողջ վճռականությամբ շեշտել, վոր բոլոր կուսակցականներին և կոմյերիտականներին գլխովին սոցմրցմամբ ու հարվածաշնությամբ ընդգրկելու մասին կուսակցության տված դիրեկտիվը գեոռն չի կատարված: Այս գործում զգալիորեն հետ են մնում — մանվածքային-գործվածքային գործարանը, ուր 487 կուսակցական բանվորներից հարվածաշնության մեջ ներգրավված են 369 հոգի կամ 74,3 տոկոսը, գունավոր մետաղների հանույթի ու մշակման գծով զբաղված բանվորները՝ 72,9 տոկոս, տեղական տրանսպորտի բանվորները՝ 60 տոկոս: Կուսակցական և արհմիութենական կազմակերպությունները պետք է աշխատեն առաջին յեռամսյակում ավելի մեծ թվով բանվորներ ընդգրկել սոցմրցման և հարվածաշնության մեջ, իսկ կուսակցականներին և կոմյերիտականներին պետք է ընդգրկեն 100 տոկոսով:

Հայաստանում սոցմրցման և հարվածաշնության խոշոր նվաճումներից մեկն է և այն, վոր հարվածաշնության մեջ ընդգրկված և ձեռնարկություններում աշխատող կանանց 77,4 տոկոսը, մինչդեռ աղամարդիկ ընդգրկված են միայն 66,7 տոկոսով: Հենց միայն այս փաստը բավական է հակահարված տալու կանանց աշխատանքի թերազնահատման այն քաղաքականության դիրքավորումներին, վորոնք մինչև որոշել կան տնտեսական ապարատի մի քանի ողակներում:

Այս բնագավառում կուսակցության ունեցած միանշանմայն հստակ դիրքավորման հետևանքով է, վոր հակահար-

ված տարով կանանց ուժն արդյունաբերության մեջ ներգրավելու գործի թերազնահատողներին՝ հնարավոր չեղավ անցյալ տարվա ընթացքում կանանցից սոցչինարարության գիտակից աշխատանքի ներգրավել մոտ 9.000 հոգի, վորից ներգրավված են հատուկ դասընթացներ ավելի քան 2.000 հոգի: Չնայած ձեռք բերված շոշափելի նվաճումներին, պարտավոր ենք հիշեցնել, վոր անցյալ տարի կանանց աշխատանքի ներգրավվելու պլանը չենք կատարել: Ճիշտ է՝ ըսկզբնական պլանը, վորը ներկայացված էր Անդրաշխօրկոմատի կողմից մոտ 6.000 հոգու, գերակատարված է, սակայն կուսակցության Կենտկոմի առաջադրած պլանը, վորով պետք է ներգրավել 11.142 հոգի, դեռ չի կատարված:

Կանանց աշխատանքի ներգրավման պլանի թերակատարումը հիմնականում պետք է բացատրել նրանով, վոր կանանց տնային աշխատանքներից ազատելու համար պլանով նախատեսված մանկամսուրների, մանկապարտեզների, և լվացքատների և նման հաստատությունների կազմակերպումը նշանակված ժամկետին չի կատարվել: Այս ուղղությամբ անհրաժեշտ է ուժեղացնել մեր պայքարը, քանի վոր 1932 և հետագա տարիներին ընթացքում կանանց խոշորագույն կադրերի ներգրավումը, ինչպես արդյունաբերության, նույնպես և սոցչինարարության մյուս բնագավառները հանդիսանում է և հանդիսանալու յե վորպես տնտեսա-քաղաքական խոշորագույն խնդիրներից մեկը:

Բավական է հիշել, վոր 1931 թվին արդյունաբերության և սոցչինարարության մյուս բնագավառները ներգրավման յենթակա կանանց թվը պետք է ավելանա հանդեպ 1931 թվի ներգրավված կանանց ընդհանուր թվի, ավելի քան 50 տոկոսով:

Չպետք է մոռանալ, վոր վողջ խորհրդային Միության մեջ բանվորական ուժի լուծման խնդիրներում, նրա պահանջի բավարարման գործում առաջնակարգ տեղերից մեկը պատկանում է խորհրդային կնոջը:

Սոցմբյուման և հարվածայնության զարգացումը բարձրագույն ձևերի՝ կոնկրետ պարտավորությունների ու ցուցանիշների համար կոնկրետ կերպով պայքարելը ղեկավարելի ու ալիքի մասսայական բնույթ և ստանում: 1931 թ. սեպտեմբեր ամսում ցենզային արդյունաբերություն 36 ձեռնարկություններում կային՝ 11 փոխ-հսկողություն բրիգադներ, վոր ընդգրկում էին 111 հոգի, 14 վորակի բրիգադներ՝ 77 հ., 11 սլանային-ոպերատիվ խմբեր՝ 83 հ., 67 հասարակական բուքսեր՝ 1790 հ., 11 ռացբրիգադ՝ 71 հ., 21 տնտհաշվարկային բրիգադ՝ 391 հ.:

Այս բրիգադների աշխատանքի վորակական ցուցանիշների հարցերը, նրանց աշխատանքի տնտեսական եֆեկտի հաշվառման հարցերն առայժմ չեն դրված պատշաճ բարձրության վրա, ահա թե ինչո՞ւ նրանց խոշոր նվաճումների վերաբերյալ առանձին հատուկոր տվյալները չենք կարող բերել բոլոր ձեռնարկությունների վերաբերմամբ: Արտադրական կոնկետիվների ու կոմունաների զարգացման հարցի առթիվ պետք է նկատենք, վոր այդպիսին լայն ծավալ ունի Տեքստիլ կոմբինատում: Մյուս ձեռնարկություններում արտադրական կոնկետիվների ու կոմունաների, ինչպես նաև տնտհաշվարկային ու արտադրական բրիգադների ստեղծման գործին զգալի չափով խանգարել է առանձին կազմակերպությունների մի քանի աշխատողների սխալ գիրքավորումն աշխատավարձի բաշխման գործում ճիշտ փոխհարաբերություններ սահմանելու խնդրում: Դրան կոնկրետ որինակ է ծառայում Մեխդործարանը, ուր կազմակերպված բրիգադները հետագյում քայքայվեցին տվյալ բրիգադների բանվորները հետագյում քայքայվեցին տվյալ բրիգադների բանվոր բեցման պատճառով:

Պլանային և արհմիութենական կազմակերպությունները պետք է շտապ կարգով ձեռնարկեն տնտհաշվարկային ու սլանային-ոպերատիվ բրիգադների տնտեսական եֆեկտը սահմանելու աշխատանքին, վորովհետև նրանց աշխատանքի

արդյունքների ամենորյա հաշվառման և նրանց ցուցադրման միջոցով մենք ալիքի մեծ չափով դարկ կտանք սոցմբյուման և հարվածայնության հետագա ծավալմանը:

Արտադրական խորհրդակցությունների աշխատանքները նրանց վերջին վերակառուցումից հետո (յերբ նրանք փոքրացվեցին և հասցվեցին արտադրական խմբերին, պրոֆեսիաներին և այլն) — մի վերակառուցում, վորով սոցմբյուման ղեկավարությունը պետք է դառնար ալիքի կոնկրետ — նրանց աշխատանքին ցույց տրված անուշադիր վերաբերմունքի պատճառով մի շարք ձեռնարկություններում վերջերս նկատելի չափով թուլացան: Դա մեր խոշոր միևուսներից մեկն է: Հարկավոր է շտապ կարգով ձեռնարկել այս աշխատանքին և դնել պատշաճ բարձրության վրա:

Հարկային ռեֆորմի հայտնի փոփոխումներից հետո, վորոնք վերացրին վարկավորման ավտոմատիզմը, ընկ. ընկ. Ստալինի, Մոլոտովի և Որջոնիկիձեյի հայտնի յեղևթյուններից հետո արդյունաբերության աշխատողների կոնֆերանսում, կուսակցությունն ամբողջ սրությամբ առաջադրեց մեր ձեռնարկությունները տնտհաշվարկի փոխադրելու հարցը, նոր պայմաններում նոր ձևով աշխատելու, նոր ձևով ղեկավարելու անհրաժեշտությունը: Կուսակցությունն ստիպված յեղավ այս ֆրոնտում ամենաանողոք հակահարվածը տալ այն ոպորտունիստական տարրերին, վորոնք թերազնահատում էին տնտհաշվարկը, չեյին հասկանում այն ամբողջ կարևորությունը, վոր ունի տնտհաշվարկի շտապ գործադրումը վողջ սոցիալիստական շինարարության համար, սոցիալիստական կուսակման տեմպերի արագացման համար, սիրում էյին «սոբեսակնություն» դրադվել և դրանով իսկ իրենց վրայից վերցնում էյին պատասխանատվություն իրենց ղեկավարած ձեռնարկության վատ աշխատանքի համար, այդ վատ աշխատանքի պատճառով ստացվող վնասնեքի համար:

Ռուբլով կոնտրոլը և կուսակցության ամենորյա լարված

աշխատանքն այդ ուղղությամբ, ամիսն չոչանիելի արդյունքներ, և չնայած այդ ամենին, հնդամյակի վերջին տարվա չեմքին, մենք ամբողջ վճռականությամբ պետք է մեր ամբողջ ուշադրությունը բեռենք այն խնդրի վրա, վոր տրնտհաշվարկը դեռևս ամենուրեք չի հասցված մինչև ցեխը, վոր քիչ բան է արված արտադրական բրիգադները տնտհաշվարկի անցկացնելու համար և վոր այս ֆրոնտում դրությունը բարենպաստ չէ: Հարկավոր է տնտհաշվարկը լայնորեն արմատացնել մինչև մեր ստորին արտադրական միավորները, հարկավոր է շտապ կարգով վերացնել դիմադրկությունը, մարտականորեն կիրառել միանձնյա ղեկավարությունը և խոշոր արդյունքներ ձեռք բերել սոցիալիստական կուտակման տեմպերն արագացնելու գործում:

Հնդամյակի վերջին տարվա չեմքին կուտակցությունն զգալի հաջողություններ ձեռք բերեց յերկրի ժողովրդատունտեսական պլանի կատարման գործում:

Խոշոր հաջողություններ են ձեռք բերված ժողտնտեսության բոլոր ճյուղերում: Հենց միայն 1931 թ. ժողովրդական տնտեսության մեջ ներդրված է արվել քան 74 միլ. ո., զգալիորեն աճեց գյուղատնտեսության սոցիալիստական հատվածը, վորն առ 1-ը հունվարի 1932 թ. իր շարքերում միտավորում էր գյուղացիական տնտեսությունների 40 տոկոսը: Խոշոր աշխատանք կատարվեց այնպիսի հիմնական պրոբլեմների իրացման նախապատրաստման ուղղությամբ, ինչպիսին է Սեմյանի լճի ոգտագործումն ելեկտրիֆիկացիայի և վոռոգման նպատակներով, մի պրոբլեմ, վորի նշանակությունը մեծ է անգամ Անդրկովկասի մասշտաբից: Բավարար նախապատրաստական աշխատանք է կատարված 8 քիմիական կոմբինատ ստեղծելու ուղղությամբ: Կուտակցությունը մարտական տեմպեր հաղորդեց սոցիալիստական խոշոր անասնապահության դարդացմանը, տեխնիկական կուլտուրաների հետագա զարգացմանը: Կիրառվում է քնդհանուր

արտադրիչ ուսումը, աննախընթաց բարձրության վրա յեդրված կուլտուրական հեղափոխությունը:

Ահա այս ֆոնի վրա, — յերբ միաժամանակ ժողովրդական տնտեսության մի քանի ճյուղերը հետ են մնացել պլանային առաջադրությունների կատարումից, յերբ մի շարք միաշենք են արված կուտանշարժման մեջ (կուտնտեսությունների աճման դեկրետավորումը Պետպլանի, Կուտնտեկենտրոնի և Հողժողկոմատի կողմից, փոխանակ նրանց հետագա կազմակերպչական-տնտեսական ամրացման համար պայքարելու), յերբ զգալիորեն հետ է մնացել վորակական ցուցանիշների առաջադրանքների կատարումը, — մենք ձեռնարկում ենք հնդամյակի վերջին տարվա ժողովրդատնտեսական պլանի կատարման համար պայքարելու գործին:

Ներկա տարին ներդրումների և ընդհանուր արտադրանքի իր մասշտաբներով տալիս է հսկայական աճում: Ամբողջ կուտակցության, ամբողջ բանվոր դասակարգի ուշադրության մոբիլիզացիան՝ Անդրկովկասյան հանրապետությունների հետագա տնտեսական-կուլտուրական շինարարության մասին ՀամԿ(բ)ԿԿ ընդունված վորոշման մարտական կատարման շուրջը, մեզ պետք է տա բայլելիկյան աշարջություն, կուտակցության գլխավոր զծի համար մղվող պայքարի ուղիներ, մենք պետք է ամենաանխնա պայքար մղենք ընդդեմ ամեն գույնի ուղորտունիզմի, ընդդեմ տվյալ շրջանի գլխավոր վտանգ ալ թեքման, ընդեմ «ձախ» խոտրումների և հակահեղափոխական տրոցկիզմի:

1932 թ. տեմպերի կատարելագույն իրացումը, վորակական ցուցանիշների կատարումը և ներդրվող կապիտալների ակտիվիզացիան — ահա մասսաներին արվելի բարձր աստիճանի կազմակերպման համար մղելիք պայքարի կենտրոնական կետը:

Մեր արդյունաբերությունը հիմք ունենալով նախնաքանց տարիներին ձեռք բերած տնտեսական և քաղաքական

խաղաղության նվաճումները, 1931 թվականը փակեց նորա-
նոր հաղթանակներով, 1931 թվի հանրագումարներն ապա-
հովեցին արդյունաբերության հնգամյակի իրագործումը 4
տարում»:

Առաջին հնգամյակի ավարտական տարում մեր աշխա-
տանքի հիմնական նշանաբանն է լինելու՝

«Նյութական միջոցների առկայությոնն ներկա պայման-
ներում, առավելապես մեծ տնտեսման հիման վրա: Արտադ-
րական հնարավորությունների լավագույն ոգտագործման,
ուժերի լավագույն մոբիլիզացիայի և պրակտիկ ղեկավարու-
թյան միջոցով տալ յերկրին շատ արտադրանք և լավ վո-
րակի»:



ФОРМ. 10 (004) (1 л.)

31. 328

32-K
CA 503



В Ю Г О

**ПРОМЫШЛЕННОСТЬ СОВЕТСКОЙ АРМЕНИИ
ЗА 1931 г.**

Госиздат ССР Армении
Ереван — 1932